

ԱՄԱԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԸ**

Հեղինակը հողվածում անդրադարձել է իրավագիտակցության էությանը, բնութագրական հատկանիշներին և կառուցվածքային տարրերին: Իրավական հոգեբանությունը զգացմունքների, սովորությունների, տրամադրությունների, ավանդույթների ամբողջություն է, որոնցում արտացոլվում է տարբեր սոցիալական խմբերի, պրոֆեսիոնալ կոլեկտիվների, առանձին անհատների վերաբերմունքը իրավունքի, օրինականության, հասարակությունում գործող իրավական հիմնարկների համակարգի նկատմամբ:

Իրավագիտակցության՝ որպես հասարակական գիտակցության հատուկ ձևի հատկանիշներն են՝

- 1) իրավագիտակցությունն արտացոլում է միայն պետաիրավական երևույթները,
- 2) իրավագիտակցությունը հասարակության կյանքի պետաիրավական երևույթներն արտացոլում է տեսական-գաղափարական ձևով,
- 3) իրավագիտակցությունը ենթադրում է համապարտադիր նորմերի պահանջների պահպանում, իրավաօրինականության ապահովում և իրավակարգի պաշտպանում,
- 4) իրավագիտակցությունն այն իրավական կատեգորիան է, որը գործում մասնակցություն ունի իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործունեության մեջ:

Հիմնաբառեր - իրավագիտակցություն, իրավական հոգեբանություն, իրավական գաղափարախոսություն:

Իրավագիտակցությունը՝ որպես հասարակական գիտակցության հատուկ տեսակ, օժտված է մի շարք բնութագրական հատկանիշներով: Վերջիններս իրավագիտակցության անկապտելի բնութագրիչներն են, որոնց շնորհիվ այն էապես տարբերվում է հասարակական գիտակցության մյուս ձևերից:

Ըստ պրոֆեսոր Ն. Ա. Ապիյանի՝ իրավագիտակցության բնութագրիչ հատկանիշներն են.

- «իրավագիտությունը հասարակական գիտակցության ձևերից մեկն է,
- իրավագիտակցությունն իրավական իրականության արտահայտման առանձնահատուկ ձև է,
- իրավագիտակցությունը ներգործում է մարդկանց գործունեության և վարքագծի վրա,
- իրավագիտակցությունը, ըստ բովանդակության և շարժառիթների, կարող է լինել դրական կամ բացասական,
- իրավագիտակցությունը ներառում է իրավական երևույթները ինչպես ստատիկ, այնպես էլ դինամիկ վիճակներում»:

Իրավագիտակցությունը նաև իրավունքի իմացությունն է, գործող իրավունքի գնահատականն ու մտքերը և գաղափարը իրավունքում ցանկալի փոփոխությունների մասին, այսինքն՝ իրավագիտակցությունը ոչ միայն օբյեկտի արտացոլման արդյունքն է, այլև օբյեկտի վրա ազդեցության միջոցը²:

Իրավագիտակցությունը, ինչպես նշեցինք, իրենից ներկայացնում է գիտակցության ոլորտ,

որն արտահայտում է մարդկանց վերաբերմունքը գործող և ցանկալի իրավունքի նկատմամբ պատկերացումների, զգացումների, հայացքների, հույզերի, գնահատականների, դիրքորոշումների, իրավական գիտելիքների ձևերով և պայմանավորում (կարգավորում) է իրավունքի սուբյեկտների վարքագիծը իրավաբանորեն նշանակալի իրադրություններում:

Իրավագիտակցության՝ որպես հասարակական գիտակցության հատուկ ձևի հատկանիշներն են.

1) *Իրավագիտակցությունն արտացոլում է միայն պետաիրավական երևույթները:* Իրավագիտակցության արտացոլման օբյեկտը հասարակական կյանքի իրավական կողմն է: Այն ընդգրկում է իրավական նորմի ստեղծման գործընթացը, դրանց պահանջների կենսագործումը հասարակական կյանքում: Քաղաքական, բարոյական և այլ գաղափարներն ու պատկերացումները ևս ակտիվորեն ներգործում են իրավական նորմի ձևավորման և կենսագործման վրա: Սակայն մինչև դրանց ամրագրումն իրավական նորմերում և իրավական նորմերի կենսագործման պրակտիկայում, դրանք պետք է անցնեն իրավագիտակցության միջով, այսինքն՝ ստանան իրավական ձև՝ գաղափարների և պատկերացումների տեսքով:

2) *Իրավագիտակցությունը հասարակության կյանքի պետաիրավական երևույթների արտացոլում է տեսական-գաղափարական ձևով:* Հասարա-

www.journal.lawinstitute.am

կական կյանքի իրավական երևույթներն արտացոլվում և իրականացվում են հատուկ իրավաբանական հասկացությունների և կատեգորիաների միջոցով: Դրանցից են, օրինակ, իրավաչափությունը, իրավահարաբերությունը, իրավական պարտականությունները, օրինականությունը: Իսկ օրինակ՝ բարոյական գիտակցությունն աշխարհն արտացոլում է սեփական հասկացությունների միջոցով՝ բարի, չար, արդարություն, անարդարություն, պատիվ և արժանապատվություն:

3) *Իրավագիտակցությունը ենթադրում է համապարտադիր նորմերի պահանջների պահպանում, իրավաօրինակության ապահովում և իրավակարգի պաշտպանում:* Հենց սրանով է, որ իրավագիտակցությունը, ի տարբերություն հասարակական գիտակցության մյուս ձևերի, կապված է իրավական նորմի, նրա որոշակիության, կանխատեսելիության, պարտադրականության և հարկադրականության հետ: Իրավագիտակցությանը բնորոշ է նաև խստագույն վերահսկողությունն իրավական պարտականությունների կատարման նկատմամբ:

4) *Իրավագիտակցությունն այն իրավական կատեգորիան է, որը գործում մասնակցություն ունի իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործունեության մեջ:* Դեռ ավելին, դրանցում պահանջվում է բարձր աստիճանի իրավագիտակցություն, որովհետև մասնակցում է իրավունքի ոչ միայն ձևավորման, այլև իրավունքի անմիջական գործադրման և դրա պահանջների պահպանման գործընթացին:

Իրավագիտակցությունն ինքնին բարդ երևույթ է: Այն ներառում է ենթահամակարգեր և դրանց կառուցվածքային տարրեր: Իրավագիտակցության կառուցվածքում, առաջին հերթին, պետք է առանձնացնել երկու տարբեր ճանաչողական մակարդակ՝ տեսական (գիտական) իրավագիտակցության մակարդակ և փորձարարական (եմպիրիկ) իրավագիտակցության մակարդակ:

Տեսական (գիտական) իրավագիտակցությանը բնորոշ է հայեցակարգային մոտեցումը, իսկ էմպիրիկ իրավագիտակցությունն իրավունքի իմաստավորումն է փորձնական, զգայական-հուզական (հոգեբանական) հարթության վրա: Տեսական (գիտական) իրավագիտակցությունն արտահայտվում է տրամաբանական-հասկացական ձևով³ (իրավական գաղափարախոսություն):

Իրավական գաղափարախոսությունն արտահայտում է առավելապես վերացական մտածողության արդյունքները: Այն ներառում է իրավունքի մասին գիտական պատկերացումները և դրանց դերը հասարակական կյանքում: Իրավական գաղա-

փարախոսությունում առաջնակարգ նշանակություն ունեն.

- մարդու բնական և անօտարելի իրավունքների,
- իրավունքի (օրենքի) գերակայության,
- օրինականության և իրավակարգի ապահովման համար:

Իրավական գաղափարախոսությունը և իրավական հոգեբանությունն անխզելիորեն կապված են միմյանց հետ և հանդես են գալիս որպես մեկ միասնական ամբողջություն:

Իրավական հոգեբանությունն արտահայտում է առավելապես ճանաչողության հայեցողական պահը: Իրավական հոգեբանությունն ամենից առաջ իրավունքի նկատմամբ զգացմունքների, տրամադրությունների, հույզերի, պատկերացումների, ապրումների, ցանկությունների համակցություն է: Այստեղ հոգեբանական վերաբերմունքն իրավական երևույթների, իրավունքի, իրավակարգի, օրինականության նկատմամբ ծավալվում է տարերային մակարդակով՝ չնայած և օրենքների միջոցով: Իրականության զգացմունքային ընկալմանը հաջորդում են շրջակա աշխարհի ճանաչողության ավելի բարձր աստիճանները: Սակայն մարդկանց հոգեբանական հաղորդակցումը, նրանց ապրումները և հոգեբանական վիճակը չեն կորցնում իրենց յուրահատկությունը, չեն լուծվում բանականի մեջ: Այդ իսկ պատճառով, ինչպես իրավաստեղծագործության, այնպես էլ իրավունքի իրացման համար կարևոր է իմանալ պետաիրավական ինստիտուտների ընկալման և դրանց արձագանքելու հոգեբանական կառուցակարգերը:

Հասկացություններն իրավական արժեքների մասին մշակվում են դեռ առօրեական գիտակցության մակարդակով, էմպիրիկ իրականության հետ շփվելու ընթացքում և անհատի սեփական պրակտիկ գործունեության հետևանքով: Չգայականի դերն այստեղ հատկապես մեծ է:

Իրավագիտակցության հոգեբանական տարրերի հիման վրա ձևավորվում են գաղափարախոսական տարրերը, իսկ գաղափարախոսությունն իր հերթին ազդում է հոգեբանական ձևավորման վրա, նրան հոգևոր սնունդ է տալիս:

Իրավագետների կողմից իրավական գաղափարների առաջադրումը, տեսական հայեցակարգերի մշակումները կարող են հենվել իրավական հոգեբանական արժեքային կողմնորոշիչների վրա, սակայն կարող են նաև մերժել կամ ճշգրտել դրանք: Ցանկացած դեպքում բանական ճանաչողությունը պետական-իշխանական իրականության ոլորտում, իրավական երևույթների ճանաչման

բարձրագույն աստիճանն է:

Իրավունքի հոգեբանական դպրոցի ներկայացուցիչները ելնում են այն դրույթից, որ բուն իրավունքն արմատավորված է մարդու բնավորությունում, նրա սպրումներում, որ զգացումները և սպրումներն ընկած են մարդու վարքագծի հիմքում: Այս դպրոցի մեկնաբանությամբ կորչում է տարբերությունը իրավունքի և իրավագիտակցության միջև:

Հարգանքի զգացումն օրենքի, իրավունքի, իրավական հիմնարկությունների նկատմամբ, լինելով օրինանպատակ, բարեխիղճ անհատների իրավագիտակցության բովանդակության տարրը, ամուր իրավակարգի, օրինականության կայուն ռեժիմի հիմքն է: Վախն օրենքից նույնպես հատուկ է առանձին կատեգորիայի անհատների համար, որոնք գիտակցում են պատժի անխուսափելիությունը կատարած հանցանքների համար:

Ժողովրդի զանգվածային գիտակցության մակարդակում իրավական հոգեբանությունն արտահայտություն է գտնում ժողովրդական բնահյուսության մեջ: Ժողովրդական ասացվածքներում, ասույթներում, երգերում իրավունքը հասկացվում է որպես ճշմարտություն, արդարություն, այն, ինչը հակակշռում է կեղծիքին, կամայականությանը, արտոնություններին:

Իրավական գաղափարախոսություն: Իրավական գաղափարախոսությունը հայացքների և պատկերացումների համակարգ է, որոնք տեսական ձևով արտացոլում են հասարակական կյանքի իրավական երևույթները: Իրավական գաղափարախոսությունն առավելապես արտացոլում է վերացական մտածողության արդյունքները: Այն ընդգրկում է իրենում հայեցակարգերի ձևով գաղափարները և հասկացությունները, իրավունքի անհրաժեշտության և դերի, դրա սպահովման, կատարելագործման, կյանքում կենսագործելու մեթոդների և ձևերի մասին: Առաջնայինը իրավական գաղափարախոսության մեջ առաջադիմական իրավական գաղափարներն են, օրինակ, մարդու անօտարելի իրավունքները և ազատությունները և այլն:

Առաջնային իրավական գաղափարներն իրավական գաղափարախոսության հենքային, հայեցակարգային տարրերն են: Իրավական գաղափարախոսությունը հիմնականում մշակվել է տեսական-փիլիսոփայական իրավագիտության կողմից: Մինչ իրավական գաղափարախոսության մեջ ընդգրկվելը այս կամ այն գաղափարը երկար ժամանակ հասունանում, ձևակերպվում է, ստուգվում է ժամանակի ընթացքում և հիմնավորվում է փորձով, որից հետո մշակվում և զետեղվում է իրավա-

կան գաղափարախոսության այլ կատեգորիաների շարքում: Հետևաբար, *իրավական գաղափարախոսությունը իրավագիտակցության կայուն տարրն է:*

Իրավական գաղափարախոսությունը բավականին երկար ժամանակ զարգանում էր քաղաքական գաղափարախոսական ուղղությունների հետ սերտ կապի մեջ: Սակայն քաղաքակրթական գործընթացները հասարակության մեջ, ժողովրդավարական զարգացումը և ընդհանուր առաջադիմությունն ավելի ու ավելի էին դրդում գուտ իրավական համամարդկային արժեքների և դրանց վրա կառուցված իրավական գաղափարների ու հասկացությունների մշակմանը: Այսպիսով, իրավական գաղափարախոսության պատմությունը ցույց է տալիս, որ այն ընդունակ է ազատագրվել սոցիալ-քաղաքական գաղափարախոսություններից, չվերածվել քաղաքական, կուսակցական գործիքի:

Իրավական գաղափարախոսությունը հայացքների և պատկերացումների համակարգ է, որոնք տեսականորեն արտացոլում են հասարակական կյանքի իրավական երևույթները: Իրավական գաղափարների և հայացքների տեսական արտացոլումը բովանդակվում է պետության և իրավունքի հարցերի, հասարակական կյանքում նրանց էության և դերի գիտական հետազոտություններում: Քանի որ նրանցում բովանդակվում են օբյեկտիվ եզրակացություններ և ընդհանրացումներ, դա օգնում է պետությանը և նրա մարմիններին դրանք արդյունավետ օգտագործել իրենց իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության մեջ:

«Իրավական գաղափարախոսությունը, - գրում է պրոֆեսոր Ն. Լ. Գրանատը,- մարդկանց, նրանց խմբերի, բնակչության և հասարակության իրավական հայացքների, սկզբունքների, պահանջների համակարգված գիտական արտահայտությունն է»⁴: Իրավական գաղափարախոսությունը հիմնավորում և գնահատում է գոյություն ունեցող կամ ծագող իրավական հարաբերությունները, օրինաչափությունը և իրավակարգը: Իրավական գաղափարախոսության մշակման գործընթացին մասնակցում են իրավաբան գիտնականները, տնտեսագետները, որոնք հաշվի են առնում կոնկրետ պատմական պայմանները, ուժերի հարաբերակցությունը, հասարակական գիտակցությունը, սոցիալական հոգեբանությունը, ինչպես մեծամասնության, այնպես էլ փոքրամասնության կամքն ու շահերը և այլն:

Իրավական հոգեբանությունը զգացմունքների, սովորությունների, տրամադրությունների, ավանդույթների ամբողջություն է, որոնցում արտացոլվում է տարբեր սոցիալական խմբերի, պրո-

Ֆեսիոնալ կոլեկտիվների, առանձին անհատների վերաբերմունքը իրավունքի, օրինականության, հասարակությունում գործող իրավական հիմնարկների համակարգի նկատմամբ: Իրավական հոգեբանությունը ներառում է իրավական զգացմունքների, գնահատումների ողջ համակցությունը: Իրավական հոգեբանության միջոցով իրացվում են՝

- ա) իրավական գիտելիքները,
- բ) իրավական կուլտուրան, սովորույթները և ավանդույթները,

գ) մարդկանց վարքագծի ինքնագնահատումը: Այստեղ բացառիկ նշանակություն ունի ազգային հոգեբանությունը՝ դարերով ձևավորված իրավական ավանդույթները, մտածելակերպը, գիտակցությունը, սովորույթները, դավանանքը և այլն, որոնք էապես ազդում են մարդկանց իրավագիտակցության վրա: Իրավական հոգեբանությունը բնութագրում է մարդկանց այն ապրումները, զգացմունքները, մտքերը, որոնք առաջանում են իրավական նորմի հրապարակման, գործող օրենսդրության վիճակի և նրա պահանջների գործնական կենսագործման կապակցությամբ: Ուրախությունը կամ տխրությունը նոր օրենքի ընդունումից հետո կոնկրետ նորմը կիրառելիս, բավարարվածության կամ անբավարարվածության զգացումը, անհամբեր կամ անտարբեր վերաբերմունքն իրավական կարգադրագրերը խախտելիս այդ բոլորը վերաբերում են իրավական հոգեբանության ոլորտին:

Իրավական հոգեբանության բովանդակության, նրա հասունության մակարդակի վրա նշանակալից չափով ազդում է հասարակական կյանքի իրավական երևույթի մասին գիտական պատկերացումների ներդրումը մարդկանց գիտակցության մեջ:

Իրավական հոգեբանությունն արտահայտում է ճանաչողության առավելապես հայեցողական (հուզական) պահը:

Դա ամենից առաջ հույզերի, ապրումների, զգացմունքների բնագավառն է: Իրավական գաղափարների, հայացքների դրսևորումը կարող է հենվել իրավական հոգեբանության դրսևորումների արժեքային հատկանիշների վրա, սակայն կարող է մերժել դրանք կամ ուղղումներ մտցնել դրանց մեջ: Ամեն դեպքում պետաիրավական երևույթների գիտական իմացությունը իրավագիտակցության առաջնակարգ ենթահամակարգն է:

¹ Ապիյան Ն.Ա., Ապիյան Ս.Ա. Իրավունքի տեսության հիմնահարցեր: Երևան, 2000, էջ 9:
² Վաղարշյան Ա.Գ. Պետության և իրավունքի տեսություն- 2. Դասախոսություններ: Երևան, 2011, էջ 225:
³ Нерсесянц В. С. Общая теория права и государства. М., 2015, С. 270.
⁴ Гранат Н.Л. Правосознание и правовое воспитание - «Общая теория государства и права. Академический курс. Том 3. Издание 2 -е, переработанное и дополненное. Отв. ред. профессор М.Н. Марченко. М., 2013, С. 305.

Амаля Арутюнян

Соискатель института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Характерные качества и структурные элементы правосознания

В статье автор отразил суть, характерные качества и структурные элементы правосознания. Правовая психология это совокупность эмоций, привычек, настроений и традиций, в которых отражается отношение разных социальных групп, профессиональных коллективов, отдельных личностей по отношению к праву, к законности, действующих в обществе правовым организациям.

Качества правосознания как особые формы общественного сознания следующие:

- 1) правосознание отражает только государственно-правовые явления,
- 2) правосознание отражает государственно-правовые явления общественной жизни в теоретически-идеологической форме,
- 3) правосознание предполагает защиту требований обязательных норм,
- 4) правосознание это правовая категория, которая принимает активное участие в правотворческой, правоприменяющей, правоохранительной деятельности.

Ключевые слова: правосознание, правовая психология, правовая идеология.

Amalya Harutyunyan

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law
of The National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

*Characteristic Features of Legal Consciousness
and Structural Elements*

In the article the author touched upon the essence of legal consciousness, characteristic features and structural elements. Legal psychology is a combination of emotions, habits, moods and traditions that reflect the attitude of different social groups, professional collectives, separate individuals towards the law, legality and the system of legal institutions operating in the society.

The features of special form of legal consciousness as a public consciousness are

- 1) legal consciousness reflects only state-legal phenomena,
- 2) legal consciousness reflects state-legal phenomena of public life in a theoretical-ideological way,
- 3) legal consciousness implies compliance with the requirements of mandatory norms, legality and protection of the legal system;
- 4) legal consciousness is a legal category that has an active participation in law establishment, law enforcement and law protection activities.

Key words: legal consciousness, legal psychology, legal ideology.